



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«19» 05 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 137 - 25

Նախաձեռնող՝

«Ավանգարդ Սթոն» ՍՊԸ

Ք. Երևան, Ավան, Քուչակ թաղամաս 2.49/26

Գործունեությունը՝

Արարարի տրավերտինների և կավերի
հանքավայրի արդյունահանում

Արարարի մարզ

Առդիր՝ 7 թերթ

Շրջանի հիմնական ջրային երակը Վեդի գետն է, հայցվող տարածքից Վեդի գետը հոսում է ավելի քան 1.4 կմ հեռավորության վրա:

Շրջանի կլիման չոր կոնտինենտալ է: Ամռանն օդի ջերմաստիճանը հասնում է մինչև $+45^{\circ}\text{C}$ (միջինը՝ $18-22^{\circ}\text{C}$), իսկ ձմռանը՝ -25°C (միջինը՝ $-18-22^{\circ}\text{C}$): Տարեկան միջին ջերմաստիճանը $+16^{\circ}\text{C}$: Ձյան ծածկույթը շրջանի ցածրադիր մասերում հիմնականում բացակայում է: Մթնոլորտային տարեկան տեղումների միջին քանակը 300 մմ է:

Հայցվող տարածքում բացակայում են անտառային ծածկույթը, գետային ցանցը, շինարարական կառույցները և բնական ու պատմամշակութային հուշարձանները:

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ առկա չեն: Մոտակա սողանքային մարմնի և հայցվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է 7.1 կմ:

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տարածքը ներառված է Երևանի ֆլորիստիկ շրջանում: Բուսական աշխարհը ներկայացված է կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, գիպսաֆիլ անապատային բուսատեսակներով: Կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Հայցվող տեղամասում համատարած հողային ծածկույթ չկա, ինչը սահմանափակում է բուսական շերտի ձևավորման հնարավորությունը: Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված, բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն դիտարկվել:

Հանքավայրի հեռավորությունը բնության հատուկ պահպանվող տարածքների միջև կազմում է՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոց մոտ 9 կմ, «Գոռավանի ավազուտներ» արգելավայր՝ շուրջ 1.2 կմ և «Խոր Վիրապ» արգելավայր՝ շուրջ 30 կմ:

Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի (ցեմենտի հումքի) հանքավայրի պաշարները 1975 թվականի հունվարի 1-ի դրությամբ (վերջին անգամ) հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 1976թ. մայիսի 26-ի N 7631 արձանագրությամբ, հետևյալ կարգերով և քանակներով:

Տրավերտինների հաշվեկշռային պաշարներ՝ ընդհանուր $A+B+C_1$ կարգերով – 309878 հազ.տ, այդ թվում՝ A կարգով 120024 հազ.տ, B կարգով 56572 հազ.տ, C_1 կարգով 133282 հազ.տ: Արտահաշվեկշռային պաշարներ՝ ընդհանուր $A+C_2$ կարգերով 67089 հազ.տ, այդ թվում՝ A կարգով 3623 հազ.տ, C_2 կարգով 63466 հազ.տ:

Կավերի հաշվեկշռային պաշարներ՝ ընդհանուր $A+B+C_1$ կարգերով – 27737 հազ.տ, այդ թվում՝ A կարգով 12277 հազ.տ, B կարգով 5405 հազ.տ, C_1 կարգով 10055 հազ.տ: Արտահաշվեկշռային պաշարներ՝ C_2 կարգով 82883 հազ.տ: Պաշարները հաշվարկվել են տրավերտինների 0.8 % խոնավությամբ 2.5 տ/մ³ ծավալային կշռով, իսկ կավերը՝ 1.79 տ/մ³ ծավալային կշռով:

Հայցվող պաշարների տեղամասի ծայրակետային կոորդինատական համակարգը ներկայացված է ARM WGS 84-ով:

1. $Y=8474840.6667$ $X=4416098.0268$,
 2. $Y=8474831.0762$ $X=4416271.2821$,
 3. $Y=8474688.2342$ $X=4416192.4900$,
 4. $Y=8474644.0914$ $X=4416192.4342$,
 5. $Y=8474663.9896$ $X=4416310.4378$,
 6. $Y=8474904.6928$ $X=4416362.0189$,
 7. $Y=8474914.9428$ $X=4416117.4322$,
- 3.7 հա:



Օգտակար հանածոյի արդյունահանման և ենթակառուցվածքների ստեղծման արդյունքում խախտվելու են 5.69 հա, այդ թվում՝ բացահանքի, ճանապարհի և լցակայանի տարածքները:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից՝ տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հանքավայրից հայցվող տարածքի մշակման համար ընտրվել է ընդերկայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին ժամանակավոր լցակայան տեղափոխումով:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 315 մ,

- ամենամեծ լայնությունը՝ 245 մ,

- բացահանքի առավելագույն խորությունը՝ 51.0 մ,

- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 1.22 մ,

- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 21.95 մ,

- օգտակար հանածոյի մարվող հաշվեկշռային պաշարները՝ 812150 մ³ կամ 2030375տ /ծավալային զանգվածը միջինը 2500 կգ/մ³/,

- այդ թվում՝ բլոկ 3-A – 2854 մ³/7135տ/, բլոկ 6-B՝ 809296 մ³/2023240տ/,

- արդյունահանվող /կորզվող/ պաշարների քանակը՝ 647785 մ³ կամ 1619462.5 տ:

- մակաբացման ապարների քանակը՝ 45140մ³,

- բացահանքի օտարման մակերեսը՝ 3.7 հա:

Համաձայն նախագծի՝ բացահանքի աշխատանքային ռեժիմն ընտրվել է ելնելով տեխնիկական առաջադրանքից և կլիմայական պայմաններից: Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընդունվում է՝

- աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր,

- շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 5 օր,

- հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ,

- հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ:

Բացահանքի տարեկան և օրական արտադրողականությունները համապատասխանաբար կազմում են 33000 մ³ /82500/ և 126.92 մ³ /317.3տ/:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

Հայցվող տարածքի մշակման տարրերն են՝

- հանքաստիճանի բարձրությունը՝ 5 մ;

- անվտանգության բերմայի լայնությունը՝ 2.0 մ;

- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը՝ 90°;

- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 20-25 մ:

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները բաղկացած են հետևյալ գործողություններից.

- օգտակար հանածոյի անջատումը զանգվածից,

- օգտակար հանածոյի հեռացումը հանքախորշից,

- օգտակար հանածոյի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:

Օգտակար հանածոյի անջատումը զանգվածից կատարվում է էքսկավատորի վրա սարքավորված հիդրավլիկական մուրճի միջոցով: Հանածոյի բարձումն ավտոմատաբար կատարվելու է բարձիչի միջոցով, իսկ իրացումը՝ սպառողի տրանսպորտային միջոցներով:



Բացահանքում լցակույտ առաջացնող ապարները 45140 մ³ ծավալով ներկայացված են մակաբացման ապարներով /ավազակավեր տրավերտինների մանր կտորներով/: Մակաբացման ապարները մինչև 930 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը՝ KAMAZ-5511 մակնիշի V=6 մ³ տարողությամբ ավտոինքնաթափի միջոցով՝ տեղափոխվելու են բացահանքի հյուսիսային և արևմտյան հատվածում՝ միջինը 0.4 կմ հեռավորության վրա ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ:

Արտաքին ժամանակավոր լցակույտ է տեղափոխվելու 34693 մ³ մակաբացման ապար: Արտաքին ժամանակավոր լցակույտի մակերեսը կազմում է՝ հիմքում՝ 14290 մ² /1.43հա/, մակերևույթում՝ 11123 մ² /1.1հա/, շեփի թեքությունը՝ 33-35°, միջին բարձրությունը՝ 2.5 մ: Ներքին լցակույտի մակերեսը կազմում է 2.74 հա, միջին բարձրությունը՝ 1.65 մ: Լցակույտառաջացումը կատարվելու է բուլդոզերային եղանակով:

Բացահանքի բացումը կատարվելու է նրա հարավ-արևմտյան մասին մոտեցող առկա գրունտային ավտոճանապարհի 914 մ բարձրության նիշ ունեցող հորիզոնից դեպի բացահանքի 950մ նիշ ունեցող հորիզոն՝ գրունտային ճանապարհի կարգաբերմամբ:

950-925մ նիշ ունեցող հորիզոնների բացումն իրականացվելու է տվյալ գրունտային ավտոճանապարհից հորիզոնական կտրող կիսախրամների անցումով: Ավտոճանապարհի երկարությունը 465 մ է, լայնությունը՝ 7 մ: Առավելագույն հաղթահարվող թեքությունը՝ 100%: 920-905 մ նիշ ունեցող հորիզոնների բացումն իրականացվելու է նույն գրունտային ավտոճանապարհից՝ թեք խրամների անցումով:

Լեռնակապիտալ աշխատանքներով նախատեսվում է՝

- բացահանքի հարավ-արևմտյան մասին մոտեցող առկա գրունտային ավտոճանապարհի 914 մ բարձրության նիշ ունեցող հորիզոնից դեպի բացահանքի 950 մ նիշ ունեցող հորիզոն գրունտային ճանապարհի կարգաբերում՝ $L=465$ մ, $b=7$ մ
- $V=975$ մ³,
- 950 մ բարձրության նիշ ունեցող հորիզոնից ապարների արդյունահանում $V=4175$ մ³, այդ թվում՝
- մակաբացման ապարներ՝ 2040 մ³,
- օգտակար հանածո՝ 2135մ³,
- դեպի լցակույտ տանող ավտոճանապարհի կառուցում՝ $L=400$ մ, $b=5$ մ - $V=650$ մ³,
- արդյունաբերական հրապարակի կառուցում՝ 350 մ³,
- լեռնակապիտալ աշխատանքների տևողությունը՝ 0.44 տարի:

Մշակված տարածության ռեկուլտիվացված տարածքը կազմելու է 2.74 հա: Ռեկուլտիվացիայի են ենթարկվելու նաև արդյունաբերական հրապարակը՝ 0.03 հա և դեպի արտաքին լցակույտ տանող ճանապարհը՝ 0.2 հա: Ընդհանուր մակերեսը կազմելու է 2.97 հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի շրջանակներում բացահանքի հատակի և լցակույտի վերին հարթակի տարածքում փռված և հարթեցված ապարները պարարտացվելու են գրանուլացված կենսահումուսով, համալիր օրգանահանքային պարարտանյութերով: Այնուհետև կատարվելու է տարածաշրջանի լանդշաֆտներին բնորոշ տեսակների սերմերի ցանք:

Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսված ծախսերի ամբողջ արժեքը կկազմի 1761240 դրամ ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի ծախսը՝ 985.62 հազար ՀՀ դրամ է:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալի են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ընդերքօգտագործման թափոնները հանքի տարածքում ներկայացված են 45140 մ³ ծավալով մակաբացման ապարներով /ավազակավեր՝ տրավերտինների կտորներով/:

Արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ զուգակցված են մի շարք այլ թափոնների առաջացում, որոնց կառավարման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներառված է հաշվետվությունում և թափոնների կառավարման պլանում:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակայանները և ավտոճանապարհները, փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Ջուրը բերվելու է ZIL-130 ավտոմեքենայի վրա հարմարեցված ջրի ցիստեռնով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ՍՊ-ՏԼԿ-1.4 ջրի ցիստեռնով: Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն՝ գետնաջրերը բացակայում են, բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածք՝ թափվող անձրևային ջրերը հեռացվելու են ինքնահոս կերպով, ինչը կներծծվի ճաքերի միջով:

Փոշենստեցման մակերեսները կազմում են՝ բացահանքում աշխատանքային հրապարակը՝ 1400 մ², լցակայանների վրա՝ 200 մ² և ավտոճանապարհների վրա՝ 2000 մ², ընդամենը՝ 3600 մ²: Տարվա կտրվածքով շոգ և չոր օրերի քանակով պայմանավորված՝ փոշենստեցման նպատակով ջրի քանակը կազմում է 432 հազ.լ/տ: Ճոպանային սղոցը և ճոպանն աշխատանքի ընթացքում սառեցնելու և առաջացած փոշին կլանելու ու տեղափոխելու համար օգտագործվելու է ջուր՝ 25.0 լ/րոպե ծավալով: Այդ աշխատանքների ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել 30.0 մ³ տարողությամբ ջրի ցիստեռնով: Ճոպանային քարհատ մեքենայի ճոպանները սառեցնող ջրերը ջրհեռացնող առվակի միջոցով թափվելու են տիղմազտիչ հոր, որտեղ փոշին հորի հատակում նստելուց (շլամ) հետո մաքրված ջուրը կրկին օգտագործվելու է ճոպանները սառեցնելու համար: Տիղմազտիչ հորի չափերն ընդունված են 4.0 x 4.0 x 3.0 մ: Տիղմազտիչ հորի հատակում հավաքված շլամը պարբերաբար հանվելու և տեղափոխվելու է արտաքին լցակայաններ:

Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

Համաձայն հաշվետվության՝ հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, ընկերությունը կազմելու է հանքի փակման վերջնական ծրագիրը, որտեղ կներառվեն բացահանքի, ենթակառուցվածքների, արտադրական հրապարակի և ճանապարհների լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, լանդշաֆտի փոփոխության և թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում տրանսպորտի աշխատանքից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխագազեր, դիզելային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի, ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների («ԷՌԱ» ծրագիր)՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Շահագործման ընթացքում նախատեսվում է օդային աղակազմի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի աղակազմման,



թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում.

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրը 2 անգամ,
- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա գազազտիչ սարքերի, ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,
- տեխնիկական միջոցների սպասարկում նախապես որոշված սպասարկման կետերում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում՝ բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,
- մաշված անվադողերի, կապարե կուտակիչների հանձնում՝ լիցենզավորված մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ ջրային ռեսուրսների մեջ արտահոսքը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթը մեկ անգամ,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,
- Կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,
- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան հատկացնել 200.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Արդյունահանման աշխատանքները կազմակերպելու համար, հիմնականում օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները: Հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Փորձաքննության ներկայացված՝ գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցության նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Հաշվետվությունում ներառված է գրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը: Նախատեսվող գործունեության համար ապահովված է սանիտարապաշտպան գոտու ապահովման համար պահանջվող չափը:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի, նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կառավարության կոմիտեն, Արարատի մարզպետարանը, Արարատ համայնքը: ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում առկա է



«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Գնահատման և փորձաքննության ընթացքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Արարատ համայնքի Ավար բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Պահպանել գնահատման հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), մոնիթորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:
3. Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումն (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Պահպանել նախագծով նախատեսված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները և բացառել հանքավայրում պայթեցման աշխատանքները:
5. Տարվա չոր ամիսներին պարբերաբար իրականացնել ջրցան օրական 2-ից 3 անգամ՝ փոշու թույլատրելի նորմատիվային մակարդակն ապահովելու համար:
6. Հանքավայրի արդյունահանման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմել հանքի փակման վերջնական ծրագիր և ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
7. Ապահովել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ավանգարդ Սթոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝



Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Արմինե Վարդանյան